# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի**
**(№ 5)**

21 ապրիլի 2017թ. ժամը՝ 15⁰⁰

1. Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Արտակարգ իրավիճակներին բարելավված նախապատրաստում և արձագանքում Հարավային Կովկասում» ծրագրի մասին:

(Էդմոն Ազարյան)

2. «Սահման» մշակութային հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Լուսավոր սահման» ծրագրի մասին:

(Անահիտ Նազարյան)

3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 17.03.2017 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի» ծրագրի մասին:

(Ռոման Չոբանյան)

**4. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին**
(Արման Բարխուդարյան)

4.1 «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին **N 1**:

4.2 Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային ակադեմիայի Բուսաբանության ինստիտուտի հասցեով հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

4.3 Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

4.4 Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին **N 1**:

4.5 Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

4.6 Հայկական կարմիր խաչի ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

4.7 «ԱՌՄ» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

4.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):



4.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ՝ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ):

4.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ):

**5. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին**
(Արման Բարխուդարյան)

5.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1253-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):

5.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N Մ-1291-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):

5.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-017-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

5.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

5.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 17-ի N Մ-136-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Դիլիջան Դեվելոփմենթ» հիմնադրամ):

5.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-044-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն):

5.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-044-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն):

5.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի մարտի 31-ի N Մ-271-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն):

5.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի N Մ-280-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայաստանի մանուկների հիմնադրամ):

5.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն):

5.11 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին **N 1** (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն):

**6. Այլ հարցեր**

6.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի N Մ-804-Ա որոշմամբ հաստատված ծրագրում լրացում կատարելու մասին («Այբ» կրթական հիմնադրամ):

6.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի մարտի 31-ի N Մ-275-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Արարատ քաղաքի զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին աջակցող» հասարակական կազմակերպության):

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

Հայկական Կարմիր խաչի ընկերության

Գլխավոր քարտուղար՝ Աննա Եղիազարյանի կողմից

«14» ապրիլի 2017թ.

«Արտակարգ իրավիճակներին բարելավված նախապատրաստում և արձագանքում Հարավային Կովկասում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ամրապնդել արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտի փոխգործակցությունը և կարողությունը Հայաստանում և Վրաստանում՝ արտակարգ իրավիճակներին համարժեք և արդյունավետ նախապատրաստվելու և արձագանքելու նպատակով, երկրների տարածքում և Հարավային Կովկասի տարածաշրջանում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով: |
| 3. | Բարեգործը | Եվրոխորհուրդի մարդասիրական օգնությունների բաժինը և Դանիական Կարմիր խաչի ընկերությունը |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ երեք մարզեր /մարզերի ընտրությունը դեռ կատարված չէ/ և Երևան քաղաքը: Բնագավառը՝ արտակարգ իրավիճակներին նախապատրաստում և արձագանքում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | **104.361.991 ՀՀ դրամ /197.060 Եվրո/ - առանց ԱԱՀ** |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայկական Կարմիր խաչի ընկերության աշխատակազմը և կամավորները որոնք ընդգրկված են արտակարգ իրավիճակներում արձագանքման /գնահատում առաջին օգնություն, սոցիալ-հոգեբանական աջակցություն և այլ/ գործողություններում, ինչպես նաև աղետներին նախապատրաստման և արձագանքման ոլորտում գործող այլ շահագրգիռ կողմեր՝ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն, մարզային և տեղական իշխանություններ և ՀՀ բնակչություն՝ արտակարգ իրավիճակի առաջացման դեպքում օպերատիվ օգնություն ստանալու միջոցով: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.03.2017 – 31.12.2018 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական | Ծրագրի շրջանակներում ծավալվող գործողությունները լինելու են հետևյալ վեց ուղղություններով՝ |

2

| | | |
|---|---|---|
| | միջոցների ծավալը | 1. Ծրագրի կառավարումը և հաշվետվողականությունը:<br>Ներառում է՝ ծրագրի մեկնարկի, գործընկերների հետ համագործակցության, շահագրգիռ կողմերի հետ խորհրդատվական խմբի ստեղծման, տեղական մակարդակում համակարգող հանդիպումների և հաշվետվողականության հետ կապված գործունեությունը:<br>1.1 Համակարգող հանձնաժողովի հանդիպման կազմակերպում Երևանում /բյուջե 1.821.807 դրամ, ժամանակահատված՝ 01.10.2017-20.12.2018թ./:<br>1.2 Շահագրգիռ կողմերի խորհրդատվական խմբի 4 հանդիպումների կազմակերպում Երևանում /բյուջե 529.595 դրամ, ժամանակահատված՝ 01.05.2017-30.11.2018թ./:<br>1.3 Երկօրյա համակարգման հանդիպման կազմակերպում Երևանում /բյուջե 1.546.418 դրամ, ժամանակահատված՝ 01.07.2017-31.10.2017թ./:<br>2. Փոխգործակցություն, փորձի փոխանակում և համակարգում:<br>Ներառում է փոխգործակցությունը պետական կառույցների հետ, ինչպես նաև փորձի փոխանակում քաղպաշտպանության մեխանիզմների ոլորտում նախաձեռնությունների վերաբերյալ:<br>2.1 Երկու կլոր սեղան հանդիպումների կազմակերպում շահագրգիռ կողմերի հետ Երևանում /բյուջե 1.271.028 դրամ, ժամանակահատված՝ 01.06.2017-30.11.2018թ./:<br>2.2 Ինն հանդիպումների կազմակերպում մարզային իշխանությունների և շահագրգիռ կողմերի հետ ՀՀ մարզերում / բյուջե 1.596.729 դրամ, ժամանակահատված՝ 01.07.2017-31.05.2018թ./:<br>2.3 ՀԿԽԸ մասնակցությունը Ծրագրի Համակարգող հանձնաժողովի արտերկրյա հանդիպումներին և փորձի փոխանակման այցերին /բյուջե 1.588.785 դրամ, ժամանակահատված՝ 01.06.2017-20.12.2018թ./:<br>3. Աղետներին նախապատրաստման շրջանակը, որը ներառում է Ստանդարտ գործողությունների ընթացակարգերի, օպերացիոն ծեռնարկի և նախապատրաստման գործողությունների հետագա պլանի մշակում:<br>3.1 Չորսօրյա աշխատանքային հանդիպման կազմակերպում միջազգային շահագրգիռ կողմերի հետ մարզում /բյուջե 1.323.990 դրամ, ժամանակահատված՝ 01.07.2017-31.10.2017թ./:<br>3.2 Առնվազն ութ Ստանդարտ գործողությունների ընթացակարգերի մշակում՝ ներառյալ 10 աշխատանքային հանդիպումների կազմակերպում մարզերում /բյուջե |

3

| | | |
|---|---|---|
| | | 4.872.275 դրամ, ժամանակահատված՝ 01.06.2017-31.05.2018թ./:<br>3.3 Իսլանդական ԿԽ փորձագետի հետ հանդիպման կազմակերպում և իրականացում /բյուջե 688.470 դրամ, ժամանակահատված՝ 01.07.2017-31.05.2018թ./:<br>4. Աղետներին արձագանքման թիմերի ձևավորում: Ընդգրկում է Աղետներին արձագանքման թիմերի կառուցվածքի թարմացում, թիմերի հավաքագրում և դասընթացների իրականացում, ԱԻ օպերատիվ կենտրոնների ստեղծում և գործունեության ապահովում, համապատասխան գույքի ձեռք բերում, ինչպես նաև ՔԿՃՄ /քիմիական, կենսաբանական, ճառագայթային, միջուկային/ գույքի ձեռք բերում:<br>4.1 15 օրյա աշխատանքային հանդիպման/ դասընթացի կազմակերպում և իրականացում երեք թիրախային մարզերում հիմնված Աղետներին արձագանքման թիմերի համար /բյուջե 8.791.275 դրամ, ժամանակահատված՝ 01.06.2017-30.11.2018թ./:<br>4.2 ՔԿՃՄ /քիմիական, կենսաբանական, ճառագայթային, միջուկային/ վերաբերյալ հնգօրյա դասընթացի կազմակերպում մարզում /բյուջե 3.005.452 դրամ, ժամանակահատված՝ 01.10.2017-30.06.2018թ./:<br>4.3 Երևանում և երեք թիրախային մարզերում ԱԻ օպերատիվ կենտրոնների հիմնման համար անհրաժեշտ և ՔԿՃՄ գույքի ձեռքբերում /բյուջե 11.958.255 դրամ, ժամանակահատված՝ 01.09.2017-31.08.2018թ./:<br>4.4 Աղետներին արձագանքման թիմերի արդյունավետ գործունեության ապահովում թիրախ մարզերում /բյուջե 1.059.190 դրամ, ժամանակահատված՝ 01.08.2017-31.12.2018թ./:<br>4.5 Աղետներին արձագանքման թիմերի և ՀԿԽԸ մարզային մասնաճյուղերի համար անհրաժեշտ թիմային և օգնություն տրամադրելու գույքի ձեռք բերում և բաշխում /բյուջե 24.626.170 դրամ, ժամանակահատված՝ 01.07.2017-31.03.2018թ./:<br>4.6 Աղետներին արձագանքման թիմերի և ՀԿԽԸ մարզային մասնաճյուղերի համար անհրաժեշտ նյութերի մշակում և տպագրում /բյուջե 9.267.912 դրամ, ժամանակահատված՝ 01.07.2017-31.03.2018թ./:<br>5. ԱԻ ժամանակ սոցիալ հոգեբանական աջակցության ապահովում: Ընդգրկում է ՀԿԽԸ սոցիալ հոգեբանական ոլորտի կարողությունների գնահատում, գործողություններ պլանի մշակում և իրականացում:<br>5.1 Իրականացնել հնգօրյա սոցիալ-հոգեբանական փորձագիտական առաքելություն /բյուջե 291.277 դրամ, ժամանակահատված՝ 01.09.2017- |

| | | |
|---|---|---|
| | | 31.03.2018թ./:<br>5.2 Իրականացնել սոցիալ հոգեբանական աջակցության վերաբերյալ դասընթացներ մարզերում /բյուջե 3.919.003 դրամ, ժամանակահատված՝ 01.02.2018-31.10.2018թ./:<br>6. Վարժանքների նախապատրաստում և իրականացում:<br>6.1 Հնգօրյա տարածաշրջանային սեմինարի կազմակերպում և իրականացում Հայաստանում /բյուջե 2.939.253 դրամ, ժամանակահատված՝ 01.03.2018-31.05.2018թ./:<br>6.2 ՀԿԽԸ աշխատակազմի համար մեկօրյա տեսական վարժանքի կազմակերպում և իրականացում Երևանում /բյուջե 476.635 դրամ, ժամանակահատված՝ 01.05.2018-31.07.2018թ./:<br>6.3 Աղետների արձագանքման թիմերի համար երկօրյա գործնական վարժանքի կազմակերպում և իրականացում մարզում /բյուջե 1.906.540 դրամ, ժամանակահատված՝ 01.05.2018-30.06.2018թ./:<br>6.4 Համատեղ միջաահմանային երկօրյա վարժանքի կազմակերպում և իրականացում ՀՀ Լոռու մարզում /բյուջե 2.833.335 դրամ, ժամանակահատված՝ 01.07.2018-31.10.2018թ./:<br><br>Ծրագրի Կազմակերպչական և պահպանման ծախսեր՝ **18.048.597** դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ գրենական պիտույքներ ձեռք բերելու և համակարգչի, կապի և կոմունալ ծախսեր: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիր՝<br>1. Աղետների արձագանքման թիմերի համար գույքի և համազգեստի ձեռք բերում, որի գումարը կազմում է 5.295.950 դրամ:<br>2. ԱԻ օպերատիվ կենտրոնների հիմնման համար անհրաժեշտ և ՔԿԱՄ գույքի ձեռք բերում, որի գումարը կազմում է 11.958.255 դրամ:<br>3. ՀԿԽԸ 12 մասնաճյուղերի համար օգնության տրամադրման առաջնային պարագաների ձեռք բերում, որի գումարը կազմում է 19.065.420 դրամ:<br>4. Աղետների արձագանքման թիմերի և ՀԿԽԸ մարզային մասնաճյուղերի համար անհրաժեշտ նյութերի մշակում և տպագրում, որի գումարը կազմում է 9.267.912 դրամ:<br>5. Ավելին, ծրագրի շրջանակներում նախատեսված հանդիպումները, |



| | | |
|---|---|---|
| | | դասընթացներն ու այլ նմանատիպ միջոցառումները իրականացնելու համար ձեռք են բերվելու գրենական պիտույքներ, սնունդ, ուսումնական վարժանքների համար՝ անհրաժեշտ պարագաներ /առաջին օգնության արկղ, կրակմարիչ և այլն/, վճարվելու է մասնակիցների համար գիշերավարձ և այլ ծախսեր, որի գումարը կազմում է **40.725.857** դրամ:<br>6. Ծրագրի Կազմակերպչական և պահպանման ծախսեր՝ **2.160.747** դրամ, որը ներառում է գործունեության համար անհրաժեշտ գրենական պիտույքներ ձեռք բերելու և համակարգչի, կապի և կոմունալ ծախսեր: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական և պահպանման ծախսեր՝ 18.048.597 դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ գրենական պիտույքներ ձեռք բերելու և համակարգչի, կապի և կոմունալ ծախսեր: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը իրականացվելու է ՀՀ երեք մարզերում և Երևան քաղաքում ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության՝ հատկապես նրա Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի, "Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ" հիմնադրամի, թիրախային համայնքների, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տրամադրել եռամսյակային, միջանկյալ և ավարտական հաշվետվություններ Դանիական Կարմիր խաչին, ինչպես նաև կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր նվիրատուների կողմից: Հայկական Կարմիր խաչի ընկերության Գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է գործունեության անմիջական վերահսկում: Նախատեսվում է կազմակերպել ծրագրի ավարտական արդյունքների, քաղած դասերի և փորձի վերաբերյալ հանդիպում Երևանում, ինչպես նաև ներկայացնել հաշվետվություններ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին, ըստ սահմանված կարգի: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

5/1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01.1/80-2/6361-17
10.04.17թ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
07.04.2017թ. N 15/15.9/8799-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Արտակարգ իրավիճակներին բարելավված նախապատրաստում և արձագանքում Հարավային Կովկասում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է ծրագրի 11-րդ կետում ներկայացված կազմակերպչական ծախսերի համար նախատեսված ֆինանսական միջոցների ծավալից տարանջատել անձնակազմի աշխատավարձի, հարկեր և այլ պարտադիր վճարների համար անհրաժեշտ գումարները և այն չներառել ծրագրի 10-րդ կետում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նունա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/14560-17
10.04.17թ

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
## ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

5/1

«12» 04 2017թ.
No 06/3-3/12339-17թ
Ձեր No

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 07.04.2017թ.
թիվ 15/15.9/8799-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Արտակարգ իրավիճակներին բարելավված նախապատրաստում և արձագանքում Հարավային Կովկասում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում ենք.

Վերանայել 11-րդ կետով նախատեսված կազմակերպչական ծախսերը՝ նվազեցման ուղղությամբ, հաշվի առնելով «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Նաիրա Բեժանյան
Հեռ. 060544705

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

044/14312-17

5/1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

13.04.17 N 02/14/6045-17

Ձեր N ____________

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 7-ի 15/15.9/8799-17 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Արտակարգ իրավիճակներին բարելավված նախապատրաստում և արձագանքում հարավային Կովկասում» ծրագրի 1-ին կետի համաձայն նախատեսվում է ամրապնդել արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտի փոխգործակցությունը և կարողությունը Հայաստանում և Վրաստանում՝ արտակարգ իրավիճակներին համարժեք և արդյունավետ նախապատրաստվելու և արձագանքելու նպատակով: Այս կապակցությամբ պարզ չէ, թե Վրաստանում ինչ միջոցառումներ են նախատեսվելու, քանի որ ծրագրի կետերում որևէ անդրադարձ չկա Վրաստանին:

Ելնելով վերոնշյալից ծրագրի դրույթներն անհրաժեշտ է հստակեցնել՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջները:

5/1

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 15

035/15073-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

5/1

«14» 04 2017թ. № 1/14/3235-17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

*Ի պատասխան Ձեր 07.04.2017թ.*
*թիվ 15/15.9/8799-17 գրության*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Արտակարգ իրավիճակներին բարելավված նախապատրաստում և արձագանքում Հարավային Կովկասում» ծրագրի մասին» որոշման նախագիծը քննարկվել է նախարարության շահագրգիռ ծառայությունների կողմից:

ՀՀ ԱԻ նախարարության և Հայկական կարմիր խաչի ընկերության միջև ձևավորվել է տարիների արդյունավետ փոխգործակցության ավանդույթ և վերոհիշյալ ծրագիրը ևս լինելու է այդ համագործակցության շարունակությունը:

Ելնելով ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված Բարեգործական որակելու և գրանցելու կարգի,, դրույթներից առաջարկում եմ ծրագիրը որակել բարեգործական:

Հարգանքով՝

ԴԱՎԻԹ ՏՈՆՈՅԱՆ

*Կատարող՝ ՀՀ ԱԻ նախարարի*
*Խորհրդական Անդրանիկ Հակոբյան*
*Հեռ. 31-77-25*

052/15126-17
14.04.17

0054, Երևան, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8 Հեռ.՝ (+374 10) 31 78 43, Էլ.փոստ՝mes@mes.am

5/1

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Արտակարգ իրավիճակներին բարելավված նախապատրաստում և արձագանքում Հարավային Կովկասում» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
| --- | --- |
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է ծրագրի 11-րդ կետում ներկայացված կազմակերպչական ծախսերի համար նախատեսված ֆինանսական միջոցների ծավալից տարանջատել անձնակազմի աշխատավարձի, հարկեր և այլ պարտադիր վճարների համար անհրաժեշտ գումարները և այն չներառել ծրագրի 10-րդ կետում: | Խմբագրված ծրագիրը կցվում է: |
| **ՀՀ արդարադատության նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Հայտնում ենք, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Արտակարգ իրավիճակներին բարելավված նախապատրաստում և արձագանքում հարավային Կովկասում» ծրագրի 1-ին կետի համաձայն նախատեսվում է ամրապնդել արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտի փոխգործակցությունը և կարողությունը Հայաստանում և Վրաստանում՝ արտակարգ իրավիճակներին համարժեք և արդյունավետ նախապատրաստվելու և արձագանքելու նպատակով: Այս կապակցությամբ պարզ չէ, թե Վրաստանում ինչ միջոցառումներ են նախատեսվելու, քանի որ ծրագրի կետերում որևէ անդրադարձ չկա Վրաստանին:<br>Ելնելով վերոնշյալից ծրագրի դրույթներն անհրաժեշտ է հստակեցնել՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջները: | Խմբագրված ծրագիրը կցվում է: |

5/1

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ կառավարության պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում ենք. վերանայել 11-րդ կետով նախատեսված կազմակերպչական ծախսերը՝ նվազեցման ուղղությամբ, հաշվի առնելով «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը: | Խմբագրված ծրագիրը կցվում է: |
| | |
| | |

5/1

**Հայկական Կարմիր խաչի ընկերություն**
**Armenian Red Cross Society**
0015, ՀՀ, ք. Երևան, Պարոնյան 21/1, Հեռ.՝ (+374 60) 62 50 50, Ֆաքս՝ (+374 60) 62 50 72
Էլ. փոստ՝ redcross@redcross.am, Ինտ. կայք՝ www.redcross.am
21/1, Paronyan str., Yerevan, 0015, RA, tel.: (+374 60) 62 50 50, fax: (+374 60) 62 50 72
E-mail: redcross@redcross.am, Web site: www.redcross.am

N 111
«14» 04 2012 թ.

5/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Տեղեկացնում եմ Ձեզ, որ հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված դիտողությունները լրամշակվել է բարեգործական որակելու նպատակով ՀՀ Կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացված «Արտակարգ իրավիճակներին բարելավված նախապատրաստում և արձագանքում Հարավային Կովկասում» դրամաշնորհային ծրագրի հայտը:

Ինչպես նաև, ի արձագանք ՀՀ Արդարադատության նախարարության դիտողությանը տեղեկացնում ենք, որ ծրագիրը ունենալով տարածաշրջանային բնույթ իրականացվելու է Հայաստանում և Վրաստանում և որպես տարածաշրջանային գործողություններ պլանավորված են տարբեր արտերկրյա հանդիպումներ և փորձի փոխանակման այցեր /տես ծրագրի հայտում գործողություն 2.3/, ինչպես նաև միջսահմանային վարժանքի կազմակերպում ՀՀ տարածքում՝ Հայկական և Վրացական կողմերի ներգրավմամբ /տես ծրագրի հայտում գործողություն 6.4/:

Կից ներկայացնում ենք լրամշակված տարբերակը:

Առդիր՝ 5 թերթ:

Հարգանքով՝

Գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյան

107-16302
14 04 12

370

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5/2

մարտի 2017 թվականի N Մ- - Ա
քաղ. Երևան

«ՍԱՀՄԱՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼՈՒՍԱՎՈՐ ՍԱՀՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի -ի N /-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի մարտի -ի N 02/17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի -ի N 06/3-8/-17, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2017 թվականի մարտի -ի N 06/3-8/-17, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի 2017 թվականի մարտի -ի N 06/3-8/-17, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի 2017 թվականի մարտի -ի N 06/3-8/-17, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի 2017 թվականի մարտի -ի N 06/3-8/-17 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի 2017 թվականի մարտի -ի N 06/3-8/-17, եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է**.

1. Բարեգործական որակել «Սահման» մշակութային հասարակական կազմակերպության (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Վերին անտառային փողոց, 146/1 շենք, բն 59 ՀՎՀՀ՝ 00120078) կողմից իրականացվող՝ 123,000,000 դրամ արժողությամբ «Լուսավոր Սահման» ծրագիրը (կցվում է):

2. «Սահման» մշակութային հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արարատի, Գեղարքունիքի Վայոց ձորի Տավուշի մարզպետներին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Սահման» մշակութային հասարակական կազմակերպության
նախագահ Գեորգես Տաբակյանի կողմից

«14» ...մարտի... 2017թ.

«Լուսավոր Սահման» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ Սահմանամերձ գյուղերի ~~(ցանկը կցված է)~~ բնակիչներին լուսադիոդային («լեդ») լամպերի անհատույց տրամադրում:<br>Այս լամպերը ավելի քիչ էլեկտրաէներգիա են օգտագործում, քան սովորականները՝ այդպիսով նվազեցնելով բնակչության ծախսերը:<br>Միջինացված հաշվարկներով յուրաքանչյուր լուսադիոդային լամպ իր արժեքը փոխհատուցում է օգտագործման արդեն 2,5-րդ ամսում, իսկ միայն երաշխիքային 36 ամսվա ընթացքում տնտեսում է առնվազն 24000 դրամ՝ չհաշված այն հանգամանքը, որ որակյալ լամպերը կարող են ծառայել մինչև 10 տարի՝ այդպիսով խնայելով մինչև 80000 դրամին մոտ գումար (ներկայիս սակագների պարագայում):<br>Ծրագրի որոշ հատված արդեն իրականացված է և որոշ գյուղերում արդեն իսկ զգացվում են ծրագրի դրական արդյունքները: ~~2017թ մարտի դրությամբ ծրագրի իրականացված մասը ներկայացված է կից աղյուսակում:~~<br>Հայտնում ենք, որ առևտրային կազմակերպության կողմից ծրագրին հատկացվող միջոցների մասով հարկային արտոնություններ չեն ակնկալվում: 5/2 |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Դրամահավաքի միջոցով անհատ բարերարներից և այլ կազմակերպություններից |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Սահման» մշակութային հասարակական կազմակերպություն (հասցե՝ |

| | | |
|---|---|---|
| | | Վերին անտառային փողոց, 2 146/1 բն 59, Կենտրոն 0009, Երևան, ՀՀ, ՀՎՀՀ՝ 00120078) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | <u>**Սահմանամերձ գյուղեր՝**</u><br>**Արարատի մարզ՝** Երասխ,<br>**Գեղարքունիքի մարզ՝** Վահան, քաղ. Ճամբարակ,<br>**Վայոց ձորի մարզ՝** Խաչիկ, Խնձորուտ, Սերս, Նոր Ազնաբերդ, Բարձրունի,<br>**Տավուշի մարզ՝** Ն.Կ. աղբյուր, Ոսկեվան, Չորաթան, Կողբ, Վազաշեն, Բերքաբեր, Ոսկեպար, Չինարի, Արծվաբերդ, Ծաղկավան (Իջ. շրջ.), Մոսեսգեղ, Դովեղ, Պառավաքար, Բերդավան, Բարեկամավան, Կոթի, Բաղանիս, Սարիգյուղ, Այգեձոր, Կիրանց, Այգեպար, Սևքար, Այգեհովիտ, Վ.Կ. Աղբյուր,<br>**Արցախ՝** Թալիշ<br><br>**Բնագավառ՝** սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 123,000,000 (հարյուր քսաներեք միլիոն) ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ սահմանամերձ գյուղերի և ԼՂՀ բնակիչները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 14.04.2017-31.12.2017թթ |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | «Լեդ» լամպերի ձեռքբերում 120.000.000 ՀՀ դրամ արժեքով, մինչև 2017թվականի դեկտեմբեր:<br>Ծրագրի հանրային իրազեկում սոցիալական ցանցերի միջոցով՝ 2017թ. ապրիլի 14-ից դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում, ինչի համար կպահանջվի 3.000.000 ՀՀ դրամի չափով ծախս: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Լեդ» լամպերի ձեռքբերում 120.000.000 ՀՀ դրամ արժեքով<br>Սոցիալական ցանցերի միջոցով ծրագրի հանրային իրազեկման ծախսեր՝ 3.000.000 ՀՀ դրամի չափով |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Սոցիալական ցանցերի միջոցով ծրագրի հանրային իրազեկման ծախսեր՝ 3.000.000 ՀՀ դրամի չափով |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հետևյալ գյուղերի համայնքապետարաններ՝<br>**Արարատի մարզ՝** Երասխ,<br>**Գեղարքունիքի մարզ՝** Վահան, քաղ. Ճամբարակ,<br>**Վայոց ձորի մարզ՝** Խաչիկ, Խնձորուտ, Սերս, Նոր Ազնաբերդ, Բարձրունի,<br>**Տավուշի մարզ՝** Ն.Կ. աղբյուր, Ոսկեվան, Չորաթան, Կողբ, Վազաշեն, Բերքաբեր, Ոսկեպար, Չինարի, Արծվաբերդ, Ծաղկավան (Իջ. շրջ.), Մոսեսգեղ, Դովեղ, Պառավաքար, Բերդավան, Բարեկամավան, Կոթի, Բաղանիս, Սարիգյուղ, Այգեձոր, Կիրանց, Այգեպար, Սևքար, Այգեհովիտ, Վ.Կ. Աղբյուր,<br>**Արցախ՝** Թալիշ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Կազմակերպությունը սահմանված կարգով հաշվետվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

5/2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01.1/80-2/5394-17
04.04.17թ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
30.03.2017թ. N 15/15.9/7739-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Սահման» մշակութային հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Լուսավոր Սահման» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում ենք ծրագրի 10-րդ կետում ներառել նաև ծրագրի գովազդի համար նախատեսված 3,000,000 դրամ գումարի չափով ծախսը, քանի որ այն իրենից ներկայացնում է ծառայությունների ձեռք բերման գործարք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
հեռ. 011 910-437

034/13743-17
04.04.17թ

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

5/2

«04» 04 2017թ.
No 06/3-3/11068-17
Ձեր No ______

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 30.03.2017թ.
թիվ 15/15.9/7739-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Սահման» մշակութային հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Լուսավոր սահման» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք.

Հաշվի առնելով կից ներկայացված փաստաթղթերը տեղեկացնում ենք, որ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին իրականացվող ծրագիրը հարկային արտոնությունների ստացման նկատառումով բարեգործական չի կարող որակվել, քանի որ համաձայն ՀՀ կառավարության 16.01.2003թ. «Բարեգործական ծրագրերի մասին» N66-Ն որոշմամբ հաստատված հավելված N2-ի 5-րդ կետի՝ «Հարկային արտոնությունների ստացման նկատառումով բարեգործական կարող են որակվել միայն այն ծրագրերը, որոնք իրականացվում են օտարերկրյա պետությունների, միջազգային միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների, միջազգային, օտարերկրյա և ՀՀ հասարակական (ներառյալ բարեգործական), կրոնական ու նմանատիպ բնույթի այլ կազմակերպությունների, առանձին բարերարների կողմից և նրանց ֆինանսական կամ այլ միջոցների հաշվին»: Հետևաբար, առաջարկում ենք ծրագրում ամրագրել, որ առևտրային կազմակերպության կողմից հատկացվող միջոցների մասով հարկային արտոնություններ չեն ակնկալվում:

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

044/13796-17

5/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

06.04.17թ. N 02/14/5420-17թ.

Ձեր N ____________

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

***Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան***

Ի կատարումն ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 30-ի 15/15.9/7739-17 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Սահման» մշակութային հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Լուսավոր սահման» ծրագրի որոշման նախագծում «մարտ» բառն անհրաժեշտ է փոխարինել «ապրիլ» բառով: Ծրագրի 1-ին կետի համաձայն ծրագրի նպատակը սահմանամերձ գյուղերի բնակիչներին լուսադիոդային լամպերի տրամադրումն է, իսկ ծրագրի 9-րդ կետի համաձայն նախատեսվում է **ծրագրի գովազդում սոցիալական ցանցերի միջոցով:** Հիշյալ դրույթներն անհրաժեշտ է հստակեցնել, քանի որ պարզ չէ, թե ինչ գովազդ է իրականացվելու, պարզ չէ գովազդի իրականացման նպատակը և վերջինիս առնչությունը ծրագրի նպատակին:

035/14097-17
06.04.17

Միաժամանակ առաջարկում ենք ծրագրի 1-ին կետում ամրագրել, որ սահմանամերձ գյուղերի բնակիչներին լուսադիոդային լամպերը տրամադրվելու են անհատույց:

5/2

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Ելնելով վերոնշյալից ծրագրի դրույթներն անհրաժեշտ է խմբագրել և հստակեցնել՝ նկատի ունենալով «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները:

5/2

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 15

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

5/2

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 Հեռ. (374010) 287401, (3740281) 2 25 22
Ֆաքս (374010) 28 18 32

„03„ „04„ 2017թ N 01/07.3/2188-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 2017-03-30 թիվ 15/15.9/7739-17 գրության հայտնում ենք, որ «Սահման» մշակութային հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Լուսավոր Սահման» ծրագրի մասին» որոշման նախագիծը քննարկվել է շահագրգիռ կազմակերպությունների հետ և արժանացել հավանության:

Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ՝ Առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն
Հեռ. 060712097

112/13534-17
03.04.17թ